

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«___» _____ 200 թ.

_____ գյուղացիական փոխօգնության միության _____ մասնաճյուղի անդամները, որոնք գործում են համապարտ պատասխանատվությամբ, այսուհետև՝ «Երաշխավոր», մի կողմից, և _____, այսուհետև՝ «Ներդրող», ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխավորը պարտավորվում է ներդրողի առջև պատասխանատվություն կրել ներդրողի և միության մյուս մասնաճյուղի անդամի միջև «___» _____ 200 թ. միության ««Երկիր» Հիմնադրամ» ծրագրի շրջանակներում կնքված թիվ _____ պայմանագրով ծրագրի Մասնակից _____, այսուհետև՝ Մասնակից, պարտավորությունների կատարման համար:

2. Կողմերի պարտականությունները

- 2.1. Երաշխավորը պարտավորվում է Ներդրողի առջև պատասխանատվություն կրել սույն պայմանագրի 11 կետում նշված պարտականությունների կատարման համար մյուս ծավալով, ինչ մասնակիցը;
- 2.2. Երաշխավորը պարտավոր է սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետի սկսվելու պահից Ներդրողին երեսուն օրվա ընթացքում վճարել Մասնակցի չվճարած գումարը;
- 2.3. Եթե Երաշխավորը սույն պայմանագրի 2.2 կետի համաձայն չկատարի իր պարտավորությունը, ապա Երաշխավորը Ներդրողին վճարում է տուգանք՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար **0,1 %** -ի չափով;
- 2.4. Ներդրողը պարտավոր է Երաշխավորին հանձնել Մասնակցի դեմ ունեցած իր պահանջները հաստատող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները՝ սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները Երաշխավորի կողմից կատարելու պահից մեկ օրվա ընթացքում:
- 2.5. Մասնակցի պարտավորությունները Երաշխավորի կողմից կատարելուց հետո Երաշխավորին են անցնում Ներդրողի իրավունքները Մասնակցի նկատմամբ այն ծավալով, որով Երաշխավորը բավարարել է Ներդրողի պահանջը; Երաշխավորն իրավունք ունի նաև Մասնակցից պահանջել՝ հատուցելու Մասնակցի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ իր կրած վնասները

3. Ժամկետները

3.1. Երաշխավորությունը դադարում է, եթե Ներդրողը պայմանագրի 1.1 կետում նշված պարտավորությունների կատարման ժամկետն սկսվելու օրվանից երեք ամսվա ընթացքում Երաշխավորին չի ներկայացնում վճարման պահանջ;

Ստորագրություններ

Երաշխավոր

Մասնակից

մասնաճյուղի անդամներ՝

Ներդրող
